

նախատէինք գքաղաքը, լիրք, ժպիրհ եղանք, լի եւրոպական պահանջանք և պարծենկոտութեամբ : Ո՞վ կրնար մեզի մեր հասած օրը ըսել զայն : Եւ ո՞ր կէտի հասանք : Հասանք ինչուան հանդէս ընելու այն օրն՝ յորում ելանք աւսարիական լոյտի պաշտօնարանէն՝ ընդ վառնա և ընդ յանուք նաւարկութեան երկու տոմնակօք : Այլ այն հանդիսին մէջ սեաւ կէտ մը կար, և էր մեր բերայի բարի բարեկամներէն բաժնուելուն տհաճութիւնն, որոնց հետ բոլոր այն իրիկունները խանդաղատանք անցուցինք : Ի՞նչ տիտուր բան է այս միշտ ողջոյն ըսելու պարտըն, և միշտ խորտակել կապանս, և ամեն տեղ թողուլ իր

սրտէն փոյուր մը : Զիայ ուրեմն արդեզք աշխարհիս մէկ կողմն ալ զիւթիչ գաւազան մը, որով ես կարենամ օր մը, 'ի սահմաննեալ ժամու, զամենին 'ի միասին յերեւան ածել՝ կահաւորեալ մեծ սեղանոյ մը բոլորակը՝ ընդ շորս հողմն երկրի սփուտած իմ բոլոր բարի բարեկամներս, զքեղ՝ 'ի կոստանդնուպօլսոյ, Սանդորոյ ։ զքեղ յափանց Ավրիկէի, Սէլսոմ. զքեղ՝ 'ի լեռնազաշտակաց Հուանտայի, Դէն Պրինք. զքեղ, Սեկովիա, 'ի կուատալիկիվիրէ, և զքեղ, Սաավերա, 'ի յակոյէ, աղաղակերու համար որ զքեղ միշտ պիտի սիրեմ : Աւաղ, գաւազանն չի գտնուիր, և 'ինոյն կ'անցնին տարիներն և յօրսք ՚ի բաց կը թոշին : Իլ շարունակուի.

Նորասրբանչ ժամացոյց մը : — Ի Պաղըն՝ գարիխտ անուամբ ժամացուցագործ մը, ներկայացուց այն քաղաքին մէջ իրմէ շինուած ժամացոյց մը, որ առաւոտը մասնաւոր 'ի կանոնաւորեալ ժամու, կ'ողջունէ արշալոյսը զըւարթ ձայնով, ապա երեք անգամ թնդանօթ մը կ'արձնէկ, և կը ներկայացընէ մարդ մը որ կը խաղայ զանազան գունտերով՝ սրոնք օգոյն փոփոխութիւնքը կը ցուցընեն : Եւ յերակի ոսկեղէն գունան կ'իմացընէ պարզ օդը, արծաթեղէնն՝ մէջը և սեաւն՝ անձրես բետոյ կին մը ձեռքը ծածանեալ դրօշով մը վերասացեալ մարդուն ընդ առաջ կ'ենէ, և դրօշին կախուելէն կը գուշակէ մրրիկ, կուրմքը մօտեցընելէն՝ կատարեալ հանդարտութիւն, և զայն քակուած թողլէն, կը նշանակէ զանազան հողմերը : Բաց աստի, ծուխ կ'արձնէ, և առաւոտը, կէսօրը և իրիկունը ՅՕ

անձանց համար պատշաճ կերակուրը կու տայ : Վերջապէս սուլելով ճշիւ կը հրաւիրէ զիմանապականս 'ի սակարան, զանդակի հնչմամբ՝ զնաւաստիս 'ի նաւահանգիստ, փողոյ ձայնով զգործաւորս յաշխատութիւն : Այս հրաշալի մէքենան անդադար գործոյ մէջ է, առագաստից կտաւ կը հիւսէ, չուաններ կ'ողէ, ցքի կը թորթորէ : Մէկ մարդ միայն կը հսկէ կաթսային քավ, և կարսոր նիւթը կը ընձեռէ : Աւելցնենք նաև՝ որ իրիկուան դէմ շրջակայից անթերի երաֆշտութիւն մը կու տայ . կը վառէ հրեղէն սիւն մը, որ կարող է լուսաւորելու փարոսի պէս շատ հեռու . կրկին և կրկին հրացանաձգութեամբ ընդհանուր հանդստեան ժամանակը կը նշանակէ, և գոյնզգոյն լապտերով մը լուսնային ամսական տեսինները կը ցուցընէ : Ի՞նչ հրաշալիք .